ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» Մայիս 2025թ. N ՄՈ/544-Ա

ք. Արմավիր

«ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի մայիսի 20–ի N ՄՈ/543-Ա որոշումը, «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ստելա Նազարյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝(Ա.Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-05-21 09:06:51 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2025 թվականի Դեկտեմբերի 29-ի

Ն ՄՈ/544**-Ա որոշման**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Անդամներ՝

Ն.Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Ջ. Եղոյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Ս.Հարությունյան

«Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող

Ընդունող՝

Ա.Մկրտումյան «Մերձավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

21.05.2025

VERIFIED OCSP 21.05.2025 09:01:59 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ